

Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց գորակոչի հանդիսավոր արարողությանը 11.01.2015թ.

Հունվարի 11-ը Տավուշի մարզում առաջին գորակոչային օրն էր: Մարզի բոլոր տարածաշրջաններում 2015 թվականի ձմեռային գորակոչի մեկնարկը տրվեց մեծ հանդիսավորությամբ: Զորակոչիկներին բանակ ճանապարհելու համար Իջևանի, Նոյեմբերյանի, Բերդի, Դիլիջանի զինկոմիսարիատների մոտ էին հավաքվել մարզի ղեկավարության ներկայացուցիչներ, համայնքների ղեկավարներ, ծնողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Իջևանի զինկոմիսարիատի մոտ արարողությանը մասնակցեց Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը: Ողջունելով գորակոչիկներին, մարզպետի տեղակալը բարեխիղճ ծառայության համար ՀՀ պաշտպանության նախարարի կողմից տրված շնորհակալագրերը հանձնեց արդեն Հայկական բանակում ծառայող տավուշցի զինվորների Անդրանիկ Դավթյանի / Իջևան/ և Անուշավան Ղևոնդյանի / Այգեհովիտ/ ծնողներին: